ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի սեպտեմբերի 12-15-ը
Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա)
գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Գագիկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)

Գործուղման ժամկետները՝ 12.09.2017-15.09.2017

4. **Հրավիրող կողմը**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

«Եվրասիական տնտեսական միության տարածքում թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների նկատմամբ գործողություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» համաձայնագրի նախագծի քննարկում:

6. **Քննարկված թեմաները**

- ԵԱՏՄ անդամ պետությունների միջև ոսկերչական արտադրանքի հարգադրոշմների փոխադարձ ճանաչման վերաբերյալ Համաձայնագրում տեղ գտած դրույթները
- նախորդ քննարկումներից բաց մնացած հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Ներկայումս ԵԱՏՄ անդամ պետությունները չեն ճանաչում միմյանց ոսկերչական արտադրանքի հարգադրոշմները, ինչը տվյալ արտադրանքի ԵԱՏՄ տարածքում շրջանառության ժամանակ դառնում է ավելորդ ծախսերի և ժամանակի կորստի պատճառ: Հարգադրոշմների չճանաչման խնդիրը Ռուսաստանի և Բելառուսի

ներկայացուցիչների կարծիքով այս բնագավառում ազգային օրենսդրությունների և արդյունքում հարգադրոշման պրոցեսի տարբերություններն են, որի հետևանքով իրենց կողմից առաջանում են այլ պետությունների հարգադրոշմների նկատմամբ վստահության խնդիրներ: Հայաստանի, Ղազախստանի և Ղրղզստան տեսակետները համընկնում էին և ուղղված են հարգադրոշմների փոխադարձ ճանաչմանը: Խորհրդակցության ընթացքում մեր կողմից բերվեցին հարգադրոշմների ճանաչման օգտին բազմաթիվ փաստարկներ (միջազգային փորձ, այլ ապրանքների հավաստագրերի համանմանություն և այլն), որոնք ընդունվեցին մասնակիցների կողմից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները.

- երկամսյա ժամկետում մշակել Համաձայնագրի մաս կազմող հավելված՝ դրանում ներառելով հարգադրոշման փոխադարձ ընդունելի այն պարտադիր նորմերը և պրոցեդուրաները, որոնք կբարձրացնեն այդ գործընթացի վստահությունը, առանց խաթարելու ազգային օրենսդրությունների հիմնական սկզբունքները: Այս դեպքում բոլոր մասնակիցները պատրաստ են ճանաչել միմյանց հարգադրոշմներն ու անվանանիշերը:
- Ղազախական կողմն առաջարկեց մշակված փաստաթուղթը քննարկել այս տարվա դեկտեմբերին Աստանայում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից սահմանված ժամկետում կմշակվեն և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին կներկայացվեն Համաձայնագրի համապատասխան հոդվածների նոր խմբագրմամբ տարբերակը և հավելվածի նախագիծը:

10. Գործուղվողը

Գագիկ Մկրտչյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը